ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Այբ կրթական հիմնադրամ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Արտասահմանյան դասագրքերի՝ «Այբ» կրթական հիմնադրամի իրականացրած անգլերենից հայերեն թարգմանությունների էլեկտրոնային տարբերակները ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը տրամադրելու վերաբերյալ

ք. Երևան 30 ապրիլի, 2021 թ.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) և «Այբ» կրթական հիմնադրամը (այսուհետ՝ «Այբ» և/կամ Հիմնադրամ)՝ որպես հանրակրթության ոլորտում ծրագրեր իրագործող հիմնադրամ (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր),

կարևորելով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում որակյալ կրթության հասանելիությունը,

խթանելու համար սովորողների շրջանում սովորելու հանդեպ հետաքրքրության մեծացումը,

գիտակցելով, որ կրթական ոլորտում համագործակցությունը միմիայն փոխշահավետ է և հանրօգուտ,

նպատակ ունենալով բարձրացնելու կրթության որակը ՀՀ-ում՝ սովորողների պատրաստվածությունը բարելավելով և ուսուցիչներին որակյալ կրթական ռեսուրսներով զինելով,

ուշադրության կենտրոնում պահելով ՀՀ-ում ԳՏՃՄ ոլորտի զարգացման անհրաժեշտությունը և այս ուղղության որակյալ ու արդիական ռեսուրսների հասանելիությունը սովորողներին և ուսուցիչներին,

համաձայնության եկան հետևյալի վերաբերյալ:

1. Կողմերը պարտավորվում են՝

1.1 համագործակցել ճշգրիտ և բնական գիտությունների առարկաների ներքոբերյալ արտասահմանյան չորս դասագրքերի՝ «Այբ» կրթական հիմնադրամի իրականացրած անգլերենից հայերեն թարգմանությունների էլեկտրոնային տարբերակները Նախարարությանը տրամադրելու և դրանք ըստ նպատակի օգտագործելու նպատակով.

- Douglas Quadling and Hugh Neill. *Mathematics for the IB Diploma Higher Level 1* (ISBN 9780521699297)
- Douglas Quadling and Hugh Neill. *Mathematics for the IB Diploma Higher Level 2* (ISBN 9780521699303)
- Jane B. Reece, and Jean L. Dickey. *Essential Biology with Physiology*. 3rd Edition (ISBN 0321649540)
- Theodore L. Brown, Jr. LeMay, H. Eugene, Bruce E. Bursten, Catherine J. Murphy, and Patrick M. Woodward. *Chemistry: The Central Science*. 12th Edition (ISBN 0321696727)

1.2 օժանդակել այս դասագրքերում շարադրված մեթոդաբանության և առարկայական բովանդակության կիրառությանը ՀՀ հանրակրթական դպրոցներում.

1.3 սույն հուշագրի շրջանակում իրականացնել էլեկտրոնային դասագրքերի փոխանցում կնքելով երկկողմ հանձնման-ընդունման ակտ, որը հիմք կդառնա Հիմնադրամի՝ հուշագրով սահմանված պարտավորությունների կատարման ապահովման համար:

2. Նախարարության պարտավորությունն է՝

2.1. ճշգրիտ և բնական գիտությունների առարկաների վերոբերյալ արտասահմանյան չորս դասագրքերի՝ «Այբ» կրթական հիմնադրամի իրականացրած անգլերենից հայերեն թարգմանություններն օգտագործել ըստ նպատակի՝ բացառելով դրանց օգտագործումը կոմերցիոն որևէ նպատակով, չփոխանցել դրանք երրորդ անձանց, որոնք կարող են դասագրքերն օգտագործել կամ տարածել կոմերցիոն նպատակներով.

2.2. դասագրքերն օգտագործել՝ պահպանելով ինչպես «Այբ» կրթական հիմնադրամի, այնպես էլ մայր հրատարակչությունների հեղինակային իրավունքը:

3. «Այբ»-ի պարտավորությունն է՝

3.1. ճշգրիտ և բնական գիտությունների առարկաների վերոբերյալ արտասահմանյան չորս դասագրքերի հայերեն թարգմանությունների էլեկտրոնային տարբերակները տրամադրել Նախարարությանն անվճար հիմունքներով:

4. Այլ պարտավորություններ

4.1. Կողմերն իրենց գործունեությունն ինքնուրույն կազմակերպող անկախ կառույցներ են, և սույն հուշագիրը չի կարող սահմանափակել այդ ինքնուրույնությունը:

4.2. Կողմերը համաձայն են իրականացնելու նաև այլ փոխաջակցություն ու համագործակցություն, որոնք բխում են սույն հուշագրում հռչակված սկզբունքներից և չեն հակասում ՀՀ օրենսդրությանը, Կողմերի ներքին կանոնակարգերին ու որոշումներին:

4.3. Կողմերը համաձայն են հուշագրի շրջանակում համագործակցությանն անդրադառնալ հրապարակայնորեն՝ փոխհամաձայնեցնելով հանրային հաղորդակցության հիմնական շեշտադրումները:

4.4. Սույն հուշագրի շրջանակում Կողմերը համաձայնում են իրենց էլեկտրոնային հարթակներում ու տպագիր հաղորդակցության միջոցներում հիշատակել հուշագրով սահմանված համագործակցությունը՝ նշելով ՀՀ հանրակրթության զարգացման գործում «Այբ» կրթական հիմնադրամի կատարած ներդրման մասին:

5. Փոփոխություններն ու լրացումները

5.1. Սույն հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել ցանկացած Կողմի նախաձեռնությամբ և երկրորդ Կողմի համաձայնությամբ:

6. Հուշագրի գործողության ժամկետը և փոփոխությունները

6.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

6.2. Հուշագիրը կարող է լուծվել ցանկացած պահի՝ Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ մյուս Կողմին այդ մասին գրավոր տեղեկացումով՝ հուշագրի լուծումից առնվազն մեկ ամիս առաջ:

7. Հուշագիրը ստորագրող կողմեր

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Այբ» կրթական հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2	ՀՀ, ք. Երևան, 0037, Ազատության պ. 1/21-1
Նախարար	Գործադիր տնօրեն
Վահրամ Դումանյան	Սոնա Կոշեցյան
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.